Գլուխ տասնհինգ

Իմ պատմած զրույցների շարքում, որոնք տեղի են ունեցել 1916թ-ի վերջին, Գ. բազմիցս շոշափել է կրոնի հարցը, և եթե որևէ մեկը ինչ-որ հարց էր տալիս կապված կրոնի հետ, Գ.-ն պարտադիր շեշտում էր այն հանգամանքը, որ կրոնի հետ կապված խնդիրներին մեր մոտեցման հիմքում ինչ-որ սխալ կա:

- Առաջին հերթին, - միշտ ասում էր նա, - կրոնը մի շատ հարաբերական հասկացություն է: Այն համապատասխանում է մարդու գոյի մակարդակին և մի մարդու կրոնը ամենևին էլ չի կարող համապատասխան լինել մեկ այլ մարդու համար, այսինքն՝ մի մարդու կրոնի մակարդակը չի համապատասխանում մեկ այլ մարդու կրոնի մակարդակին:

Պետք է հասկանալ որ համար մեկ մարդու կրոնը մի տեսակ է, իսկ համար երկուսինը՝ մեկ այլ տեսակ, երեքինը՝ մեկ այլ: Համար չորսի, հինգի, վեցի և մնացյալի կրոնները միանգամայն տարբեր են համար մեկի, երկուսի, երեքի կրոններից:

Երկրորդ տեղում կրոնը գործողություն է: Մարդը հազիվ թե մտածի իր կրոնի մասին կամ զգա այն. նա "ապրում" է իր կրոնով այնքան, որքան կարող է, այլապես դա արդեն կրոն չի լինի, այլ երևակայություն կամ փիլիսոփայություն: Երբ նա այն սիրում կամ չի սիրում, նա կրոնի նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտում է արարքների միջոցով: Հետևաբար, եթե իր արարքները հակադրվում են տվյալ կրոնի պահանջներին, նա կարող է հայտարարել, որ ինքը տվյալ կրոնին չի պատկանում: Մարդկանց մեծ մասը, ովքեր իրենց քրիստոնյա են անվանում, դրա իրավունքն անգամ չունեն, քանի որ նրանք ոչ միայն չեն կատարում դրա պահանջները, այլ չեն էլ նույնիսկ մտածում, որ դրանք պետք է կատարել:

Քրիստոնեությունը արգելում է սպանելը, մինչդեռ մեր առաջընթացը արտահայտվում է միայն մարդուն սպանելու տեխնիկաները զարգացնելու մեջ և պատերազմներում: Ինչպե՞ս կարող ենք մենք մեզ քրիստոնյա անվանել:

Այն մարդը, ով չի կատարում Աստծո պատվիրանները, իրեն քրիստոնյա կոչելու իրավունք չունի: Մարդը կարող է ասել, որ նա ցանկանում է քրիստոնյա լինել, եթե նա փորձում է պատվիրանները կատարել: Եթե նա դրանց մասին ամենևին էլ չի մտածում, ծիծաղում է դրանց վրա կամ էլ փոխարինում է դրանք իր սեփական հայտնագործություններով կամ պարզապես մոռանում է դրանց մասին, նա ոչ մի դեպքում իրավունք չունի իրեն քրիստոնյա անվանել:

Ես պատերազմը որպես ամենավառ օրինակ վերցրեցի: Բայց նույնիսկ առանց պատերազմի մեր կյանքը լրիվ նույնն է: Մարդիկ իրենց քրիստոնյա են անվանում, սակայն չեն գիտակցում, որ նրանք ոչ միայն չեն ուզում քրիստոնյա լինել, այլև անկարող են, որովհետև քրիստոնյա լինելու համար ոչ միայն ցանկություն է պետք, այլ պետք է կարողանալ և լինել քրիստոնյա:

Մարդը ինքն իրենով մեկը չէ, նա "ես" չէ, նա "մենք" է, կամ ավելի ճիշտ կլինի ասել նա "նրանք" է: Ամեն ինչ սկիզբ է առնում այստեղից: Եկեք ենթադրենք, որ ինչ-որ մեկը որոշում է համաձայն պատվիրանի իր ձախ այտը թեքի, եթե որևէ մեկը ապտակի աջին: Բայց այս որոշումը գլխում կամ էլ էմոցիոնալ կենտրոնում կայացնում է մեկ "ես"-ը: Մեկ "ես-ը" գիտի դրա մասին, մյուս "ես"-ը հիշում է դրա մասին, իսկ մնացածը՝ ոչ: Եկեք պատկերացնենք, որ դա իրականում պատահեց՝ ինչ-որ մեկը ապտակեց այս մարդում: Ձեր կարծիքով նա իր ձախ ա՞յտը կթեքի: Երբե՛ք: Նա դրա մասին մտածելու ժամանակ անգամ չի ունենա: Նա կամ կապտակի իրեն խփողին, կամ ոստիկան կկանչի, կամ էլ պարզապես կռվի մեջ կմտնի նրա հետ: Նախքան մարդը կգիտակցի, թե ինչ է անում,

նրա շարժողական կենտրոնները ինքնաբերաբար կսկսեն գործել՝ ասես իրենց այդպես էլ սովորեցրել են պատասխան ռեակցիա տալ:

Մյուս այտը թեքելու համար ավելի երկար ուսուցում և վերապատրաստում է հարկավոր, և եթե այդ ուսուցումը մեխանիկական է, ապա այն կրկին ոչ մի արժեք չունի, քանի որ այս դեպքում մարդը թեքում է իր մյուս այտը, որովհետև ուրիշ ոչինչ չի կարող անել:

- Իսկ չի՞ կարող աղոթքը օգնել մարդուն ապրել ինչպես քրիստոնյա:, - հարցրեց մեկը:

- Կախված է, թե ում աղոթքը, - պատասխանեց Գ.-ն: - Ինչ-որ մի սուբյեկտի աղոթքը, ասենք՝ մարդ համար մեկի, երկուսի, երեքի, կարող է միայն սուբյեկտիվ արդյունք տալ, օրինակ ինքնասփոփանք, ինքնահիպնոս: Այն չի կարող օբյեկտիվ արդյունք տալ:

- Իսկ աղոթքը ընհանուր առմամբ չի՞ կարող օբյեկտիվ արդյունք տալ, - հարցրեց ներկաներից մեկը:

- Ես արդեն ասեցի, նայած թե ում աղոթքը: Մարդը պետք է սովորի աղոթել այնպես, ինչպես նա սովորում է մնացած ամեն ինչը: Այն մարդը, ով գիտի ինչպես ճիշտ աղոթել և կարող է ճիշտ կերպով կենտրոնանալ, նրա աղոթքը արդյունք կտա: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ գոյություն ունեն տարբեր աղոթքներ և նրանց արդյունքներն էլ տարբեր են: Դա հայտնի է նույնիսկ ամենօրյա ծիսակատարություններից: Երբ մենք խոսում ենք աղոթքներից կամ դրա արդյունքներից, մենք ի նկատի ունենք միայն մեկ տեսակի աղոթք, այն է՝ խնդրանքը կամ էլ կարծում ենք, որ խնդրանքը կարելի է կապել մնացած աղոթքների հետ: Սա, իհարկե, ճիշտ չէ: Աղոթքների մեծ մասը, ամենևին էլ կապ չունեն խնդրանքի հետ: Ես խոսում եմ հնադարյան աղոթքների մասին, որոնցից շատերը շատ ավելի հին են, քան քրիստոնեությունը: Այս աղոթքները, կարելի է ասել, կարճ կրկնություններ են. բարձրաձայն կամ մտքում կրկնելով դրանք՝ մարդը փորձում է հասկանալ և զգալ թե ինչ կա դրանց մեջ, դրանց բովանդակության մեջ: Եվ մարդը միշտ էլ կարող է ինքն իրեն նոր աղոթքներ անել: Ամբողջ գաղտնիքը կայանում է նրանում, թե ինչպես է նա աղոթում: Եթե նա նույնիսկ օրը տաս հազար անգամ կրկնի աղոթքը, բայց միևնույն ժամանակ մտածի թե երբ է այն ավարտելու, կամ թե ինչ է ուտելու ճաշին, սա այլևս աղոթք չի լինի, այլ ինքնախաբեություն:

Բայց այն կարող է դառնալ աղոթք, եթե մարդն արտասանի այն այսպես; ասի 'ես' և փորձի այդ պահին մտածել այն ամեն ինչի մասին, ինչ գիտի 'ես'-ի մասին: Մեկ եզակի 'ես' գոյություն չունի, այլ կան հազարավոր չնչին, աղմկարար, կռվարար 'ես'-եր: Բայց նա ցանկանում է լինել միակ 'ես'-ը՝ տիրակալը, ու մտածում է կառքի, ձիու, վարորդի և տիրակալի մասին: 'Ես'-ը տերն ու տիրակալն է: 'Ցանկանալ', նա հասկանում է այս բառի իմաստը՝ որպես 'ես ուզում եմ': Արդյո՞ք նա ի վիճակի է ցանկանալ: Նրա հետ են մշտապես "ցանկալի է" և "ցանկալի չէ" գաղափարները: Բայց այս "ցանկալի է" կամ "ցանկալի չէ" գաղափարները նա փորձում է հակադրել իր սեփական 'ես ուզում եմ'-ին, որը կապված է ինքն իր վրա աշխատելու ձգտումների հետ, այն է՝ ներգրավել մի երրորդ ուժ երկու ուժերի սովորական համակցության մեջ. "ցանկալի է" և "ցանկալի չէ": 'Լինել'. մարդը մտածում է՝ ինչ լինելը, ինչ է նշանակում 'լինել': Լինել մեխանիկական մարդ, ում հետ ամեն ինչ պատահում է: Լինել մարդ, ով կարող է գործել: Հնարավոր է 'լինել' տարբեր ձևերով: Նա ցանկանում է 'լինել' ոչ թե զուտ գոյություն ունենալու, այլ հզոր ուժին տիրելու իմաստով: 'Լինել' բառը նոր իմաստ է պահանջում: 'Լուրջ', մարդը մտածում է՝ ինչ է նշանակում լինել լուրջ: Այն, թե ինքն իրեն ինչ է պատասխանում, շատ

կարևոր է: Եթե նա հասկանում է՝ ինչ է դա նշանակում, եթե կարողանում է ինքն իր համար մեկնաբանել ճիշտ կերպով, թե ինչ է նշանակում լինել լուրջ և զգում է, որ ինքն իրոք ձգտում է դրան, այդ դեպքում իր աղոթքը կարող է արդյունք ունենալ այն իմաստով, որ նա կարող է ավելի ուժեղ լինել և շատ ավելի հաճախ զգալ, թե երբ է անլուրջ, որ կարող է ինքն իրեն ավելի հեշտությամբ զսպել և դառնալ ավելի լուրջ: Հենց նույն կերպով էլ մարդ կարող է 'աղոթել՝ 'ես ուզում եմ հիշել ինքս ինձ': 'Հիշել'. ի՞նչ է նշանակում 'հիշել': Մարդը պետք է մտածի հիշողության մասին: Որքա՛ն քիչ է նա հիշում: Որքա՛ն հաճախ է մոռանում, թե ինչ էր որոշել, ինչ էր տեսել կամ ինչ գիտեր: Նրա ամբողջ կյանքը կարող էր այլ լիներ, եթե նա հիշեր: Բոլոր չարիքները ծագում են նրանից, որ նա չի հիշում: 'Ինքս ինձ' - նորից վերադառնում է ինքն իրեն: Ի՞նչ ես է նա փորձում հիշել: Արժի՞ արդյոք հիշել ինքն իրեն: Ինչպե՞ս կարող է առանձնացնել՝ ինչ է ուզում հիշել: Աշխատելու գաղափարը: Ինչպե՞ս կարող է ինքն իրեն կապել աշխատանքի գաղափարի հետ և այլն…և այլն…

'Քրիստոնեության մեջ բավականին շատ այդպիսի աղոթքներ կան, որտեղ պետք է ամեն բառի վրա հատուկ ուշադրություն դարձնել: Բայց դրանք կորցնում են իրենց ամբողջ իմաստը, երբ պարզապես արտասանվում կամ մեխանիկորեն երգվում են:

Եկեք օրինակ դիտարկենք ամենահասարակ *Աստված իմ, ներիր ինձ* արտահայտությունը: Ի՞նչ է այն նշանակում: Մարդը դիմում է Աստծուն: Նա պետք է նախ մի փոքր մտածի, պետք է համեմատի և հարցնի ինքն իրեն՝ ինչ է Աստված և ինչ է ինքը: Նա կոչ է անում Աստծուն ներել իրեն: Բայց դրա համար Աստված նախ պետք է *մտածի նրա մասին, ուշադրություն դարձնի նրա վրա*: Բայց արժի՞ արդյոք ուշադրություն դարձնել նրա վրա: Ի՞նչ կա նրա մեջ, որ արժե մտածել նրա մասին: Եվ ո՞վ պետք է մտածի նրա մասին: Հենց ինքը՝ Աստված: Տեսնում եք, ահա այս բոլոր մտքերը և դեռ ավելին պետք է անցնի նրա մտքով, երբ նա արտասանում է այդ պարզագույն աղոթքը: Եվ հենց այդ մտքերն են, որ կօգնեն նրան, որ Աստված անի այն, ինչ նա խնդրում էր: Բայց ինչի՞ մասին կարող է նա մտածել կամ ի՞նչ արդյունք կարող է տալ աղոթքը, եթե նա պարզապես կրկնի թութակի պես. 'Աստված, ների՛ր ինձ: Աստված, ների՛ր ինձ: Աստված, ների՛ր ինձ': Դուք ինքներդ գիտեք, որ սա ոչ մի արդյունք էլ չի կարող ունենալ':

'Ընդհանրապես մենք շատ քիչ գիտենք քրիստոնեության և քրիստոնեության մեջ երկրպագելու ձևերի մասին, մենք ոչինչ չգիտենք դրա պատմության և մի շարք բաների ծագման մասին: Օրինակ, եկեղեցին, տաճարը, որտեղ հավաքվում են հավատացյալները և որտեղ ըստ հատուկ ծեսերի արարողություններ են տեղի ունենում, որտեղի՞ց է այս ամենը ծագել: Շատ մարդիկ նույնիսկ չեն էլ մտածում դրա մասին: Շատ մարդիկ կարծում են, որ պաշտամունքի արտաքին ձևերը՝ ծիսակատարություններ, օրհներգերը և այլն հորինվել են եկեղեցու նախահայրերի կողմից: Մյուսներն էլ այն կարծիքին են, որ այս ծիսակատարությունները փոխառնվել են մասամբ հեթանոսությունից, մասամբ էլ հրեաներից: Բայց այդ կարծիքները սխալ են: Քրիստոնեական եկեղեցու ծագման հարցը շատ ավելի հետաքրքիր է, քան մենք կարող ենք պատկերացնել: Նախ պետք է իմանալ, որ եկեղեցին ինքն իրենով, և երկրպագության ձևերը պարզապես հնարավոր չէր վերցնել հեթանոսությունից, որովհետև այդպիսի բան չկար ո՛չ հունական, ո՛չ էլ հռոմեական պաշտամունքներում կամ հուդաիզմում: Հրեական սինագոգը, հրեական տաճարները, հունական և հռոմեական տարբեր աստվածների տաճարները միանգամայն տարբեր են եղել քրիստոնեական եկեղեցուց, որի տեսքը ձևավորվել է առաջին և եկրորդ դարերի ընթացքում: Քրիստոնեական եկեղեցին դպրոց է, պարզապես մարդիկ մոռացել են, որ

այն դպրոց է: Պատկերացրեք մի դպրոց, որտեղ ուսուցիչները դասեր են տալիս և բացատրական ցուցադրություններ ներկայացնում առանց հասկանալու, որ դրանք դասեր և ցուցադրություններ են, և որտեղ աշակերտները կամ պարզապես մարդիկ, որոնք եկել են դպրոց, սովորում են այս դասերն ու ցուցադրությունները ծիսակատարությունների կամ արարողությունների կամ ‘հաղորդությունների’, օրինակ՝ մոգության համար: Սա համարյա հավասարվում է մեր օրերի քրիստոնեական եկեղեցիներին:

‘Քրիստոնեական եկեղեցին, քրիստոնեությունը երկրպագելու ձևերը չեն հորինվել եկեղեցու հայրերի կողմից: Այդ ամենը վերցվել է արդեն պատրաստ Եգիպտոսից, միայն ոչ այն Եգիպտոսից, որը մենք գիտենք, այլ նրանից, որի մասին չգիտենք: Այդ Եգիպտոսը գոյություն է ունեցել նույն վայրում, միայն թե շատ ավելի վաղ ժամանակներում: Դրա միայն շատ չնչին մասերն են գոյատևել պատմական ժամանակներում, և դրանք էլ գաղտնի են պահվել և այնքան լավ են թակցվել, որ անգամ չգիտենք, թե որտեղ են դրանք պահվում:

Շատ մարդկանց համար տարօրինակ կթվա, եթե ասեմ, որ այս նախնադարյան Եգիպտոսը քրիստոնեական էր Քրիստոսի ծնունդից շատ հազարավոր տարիներ առաջ դեռևս, ավելի շուտ՝ այդտեղի կրոնի հիմք էին կազմում նույն սկզբունքներն ու գաղափարները, որոնք հիմա համարվում են իսկական քրիստոնեական: Այս նախնադարյան Եգիպտոսում գոյություն ունեին հատուկ դպրոցներ, որոնք կոչվում էին ‘կրկնողության դպրոցներ’: Այս դպրոցներում հասարակական դասեր էին տրվում հատուկ օրերին, և նույնիսկ որոշ դպրոցներում ամեն օր՝ ամբողջ դասընթացի խտացված կրկնողություններ այն գիտությունների, որոնք ուսուցանվում էին այդ դպրոցներում: Հաճախ այս կրկնողությունները տևում էին մեկ շաբաթ կամ մեկ ամիս: Շնորհիվ այս կրկնողությունների, մարդիկ ովքեր արդեն անցել էին այդ դասընթացները չէին կտրվում դպրոցից և հիշողության մեջ մնում էր այն, ինչ սովորել են: Հաճախ նրանք գալիս էին շատ հեռվից պարզապես լսելու այդ կրկնողությունները և հեռանում էին՝ զգալով իրենց կապը դպրոցի հետ: Տարվա մեջ հատուկ օրեր գոյություն ունեին, երբ կրկնողությունները անբողջական էին լինում և դրանք անցկացվում էին հատուկ հանդիսավորությամբ. այս օրերը իրենց մեջ հատուկ խորհրդանշական իմաստ էին պարունակում:

“Այս ‘կրկնողության դպրոցները’ ծառայել են որպես մոդել քրիստոնեական եկեղեցիների համար. երկրպագության ձևը քրիստոնեական եկեղեցիներում համարյա ամբողջությամբ ներկայացնում է դասընթացների կրկնողության ձևը այն գիտության, որը ուսումնասիրում է տիեզերքն ու մարդուն: Անհատական աղոթքները, հիմները, արձագանքները, այս ամենը իրենց սեփական իմաստն ունեին կրկնողություններում, ինչպես նաև տոներն ու այլ կրոնական խորհրդանշանները, չնայած որ դրանց իմաստը շատ վաղուց է, ինչ մոռացվել է”:

Շարունակելով՝ Գ.-ն մեջբերեց մի քանի շատ հետաքրքիր օրինակներ, որոնք բացատրում են ուղղափառ ծիսակատարությունների տարբեր մասերը: Ցավոք ոչ մի գրառումներ չեն արվել այդ ժամանակ, և ես չեմ փորձի վերականգնել դրանք հիշողությունիցս:

Ընդհանուր գաղափարն այն էր, որ առաջին իսկ բառերի հետ սկսած՝ պատարագը այսպես ասած անցնում է արարման գործընթացով՝ գրանցելով բոլոր փուլերն ու փոփոխությունները: Գ.-ի բացատրություններում ինձ հատկապես հիացրեց այն, որ այդքան շատ պահպանվել է իր անաղարտ ձևով, և թե մենք ինչքան քիչ ենք հասկանում այս ամենից: Նրա բացատրությունները շատ տարբերվում էին թե սովորական

աստվածաբանական, թե մոգական մեկնաբանություններից: Եվ հիմնական տարբերությունը այն էր, որ նա վերջ դրեց բոլոր տեսակի զանազան այլաբանություններին: Նկատի ունեմ՝ նրա բացատրություններից պարզ դարձավ, որ մենք շատ բաների մեջ ենք այլաբանություններ տեսնում, որտեղ նույնիսկ այլաբանությունների մասին խոսք էլ չկա, և որոնք պարզապես պետք է հասկանալ ավելի պարզ ձևով և հոգեբանական մոտեցում ցուցաբերել: Այն, ինչ նա ասել էր ավելի վաղ Վերջին Ընթրիքի մասին սրա շատ վառ օրինակն է:

“Ամեն ծիսակարգ կամ արարողություն արժեք ունի, եթե այն կատարվում է առանց փոփոխությունների”, - ասում էր նա:” Ծիսակարգը մի գիրք է, որտեղ շատ բաներ կան գրված: Ցանկացած մարդ, ով հասկանում է, կարող է կարդալ: Մեկ ծիսակարգ նույնիսկ պարունակում է ավելի քան հարյուրավոր գրքեր՝”

Նշելով, թե ինչ է պահպանվել մինչև մեր օրերը՝ Գ.-ն միևնույն ժամանակ մատնացույց արեց այն, ինչ կորել է կամ մոռացվել: Նա խոսեց հոգևոր պարերի մասին, որոնք ուղեկցում էին ՝ծառայությունները՝ ՝կրկնողության տաճարներում՝ և որոնք չեն ներառվել քրիստոնեական ծիսակարգերում: Նա նաև պատմում էր զանազան վարժությունների և տարբեր աղոթքների համար նախատեսված դիրքերի մասին, այն է՝ տարբեր տեսակի մեդիտացիաների համար՝ շնչառությունը կառավարելու, ի վիճակի լինելու ձեռք բերել որոշակի մկաններ լարելու կամ թուլացնելու կարողություն կամ կառավարել ամբողջ օրգանիզմի մկանները, և շատ այլ բաների մասին, որոնք կապ ունեն այսպես կոչված կրոն ՝տեխնիկայի՝ հետ:

Մի անգամ կենտրոնանալու և ուշադրությունը մարմնի մի մասից մյուսը տանելու վարժությունների հետ կապված՝ Գ.-ն հարցրեց.

“Երբ դուք արտասանում եք ՝ես՝ բառը բարձրաձայն, նկատե՞լ եք արդյոք՝ որտեղից է այդ ձայնը հասնում ձեզ”:

Մենք միանգամից չհասկացանք, թե նա ինչ նկատի ուներ: Բայց շատ շուտով սկսեցինք նկատել, որ ՝ես՝ բառը արտասանելիս՝ մեզնից ոմանք զգում էին, որ այն հնչում է գլխում, մյուսները՝ կրծքավանդակում, իսկ մի մասն էլ՝ գլխից վերև՝ մարմնից դուրս:

Պետք է ընդունեմ, որ ինձ այդպես էլ չհաջողվեց արթնացնել այդ զգացողությունը իմ մեջ, և որ պարզապես պետք է վստահեմ մյուսներին:

Գ.-ն լսեց այս բոլոր կարծիքները և ասեց, որ մի այդպիսի վարժություն կա, որը, ըստ նրա՝ պահպանվել է Աթոս սարի վանքերում նույնիսկ մեր ժամանակներում:

Քահանան ծնկի է գալիս կամ կանգնում է հատուկ դիրքով և բարձրացնելով վեր ձեռքերը՝ արմունկները մի փոքր ծալած՝ նա բարձրաձայն ասում է ՝Էգո՝ և շարունակում է՝ փորձելով լսել, թե որտեղից է հնչում ՝Էգո՝ բառը:

Այս վարժության իմաստն այն է, որ մարդ կարողանա հասկանալ ՝ես՝-ը ամեն անգամ, երբ նա մտածում է իր մասին և կարողանա շարժել ՝ես՝-ը մի տեղից մյուսը:

Գ.-ն շատ անգամներ ցույց է տվել այս մոռացված ՝տեխնիկան՝ սովորելու անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ կրոնի միջոցով որևիցե արդյունքների հասնելու անհնարինությունը դրա բացակայության դեպքում՝ ակնկալելով սուբյեկտիվ արդյունքներ:

՝Պետք է հասկանալ, - ասում էր նա, - որ ամեն իսկական կրոն, այն է՝ ստեղծված ուսյալների կողմից հատուկ նպատակներով, բաղկացած է երկու մասինց: Մի մասը սովորեցնում է՝ *ինչ* պետք է անել: Այս մասը դառնում է հանրահայտ և ժամանակի ընթացքում աղավաղվում և հեռանում է սկզբնաղբյուրից: Մյուս մասը սովորեցնում է, թե *ինչպես* անել այն, ինչ սովորեցնում է առաջին մասը: Այս մասը գաղտնի է պահվում

հատուկ դպրոցներում, և դրա միջոցով միշտ հնարավոր է շտկել այն, ինչ աղավաղվել է առաջին մասում կամ՝ վերականգնել այն, ինչ մոռացվել է:

‘Առանց այս երկրորդ մասի կրոնի մասին գիտելիք գոյություն ունենալ չի կարող կամ ամեն դեպքում այդ գիտելիքները կլինեն անբավարար կամ շատ սուբյեկտիվ:

‘Այս գաղտնի մասը գոյություն ունի նաև քրիստոնեության մեջ, ինպես նաև այլ կրոններում, և այն սովորեցնում է՝ հետևել Քրիստոսի պատվիրաններին և թե ինչ են դրանք իրականում նշանակում’:

Այստեղ ես պետք է մեջբերեմ ևս մեկ խոսակցություն Գ.-ի հետ, որը նորից կապված է տիեզերքի հետ:

‘Սրա հիմքում ընկած են Կանտի phenomena և noumena գաղափարները, - ասեցի ես: Բայց ամբողջ իմաստը հետևյալն է՝ երկիրը, որպես եռաչափ տարածական մարմին phenomenon է, որպես վեց տարածական մարմին՝ noumenon’:

‘Շատ ճիշտ է, - ասեց Գ.-ն, - միայն դրան ավելացրու նաև չափաբաժնի գաղափարը: Եթե Կանտը իր բոլոր դիտարկումներին ավելացներ նաև չափի գաղափարը, շատ բաներ, որ նա գրել է, կլինեին արժեքավոր: Սա այն միակ բանն է, որ պակասում է նրա աշխատանքներում’:

Լսելով Գ.-ին՝ ես մտածում էի, որ Կանտը շատ կզարմանար այս հայտարարության վրա: Բայց չափի գաղափարը շատ մոտ է ինձ: Եվ ես հասկացա, որ ընդունելով դա որպես սկզնակետ՝ հնարավոր է տեսնել շատ նոր և անսպասելի բաներ, որոնք մենք կարծում ենք, թե տեսնում ենք:

Մոտ մեկ տարի անց՝ մինչ ես զարգացնում էի տիեզերքի կապը ժամանակի խնդիրների հետ գաղափարները, ես ձեռք բերեցի տարբեր տիեզերքների ժամանակացույց, որի մասին ավելի ուշ կխոսեմ:

Մի անգամ, երբ խոսում էինք տիեզերքում ամեն ինչի հաջորդաբար կապվածության մասին, Գ.-ն անդրադարձավ ‘երկրի վրա օրգանական կյանքի’ գաղափարին:

‘Ընդհանուր գիտելիքների համաձայն, - ասեց նա, - օրգանական կյանքը ինչ-որ պատահական հավելվածի տեսակ է, որը խախտում է մեխանիկական համակարգի միասնությունը: Ընդհանուր գիտելիքները դա ոչնչի հետ չեն կապում և ոչ մի եզրահանգումներ չեն անում դրա գոյության գաղափարից: Բայց պետք է մինչև հիմա հասկացած լինեիք, որ բնության մեջ ոչինչ պատահական կամ ավելորդ չէ և չի կարող լինել, ամեն ինչ ունի որոշակի գործառույթ, ամեն ինչ ծառայում է որոշակի նպատակի: Այսպիսով, օրգանական կյանքը մի անքակտելի կապ է աշխարհների շղթայի մեջ, որոնք չեն կարող գոյություն ունենալ առանց մեկը մյուսի: Ասում են, որ օրգանական կյանքը փոխանցում է տարբեր տեսակի մոլորակային ազդեցություններ երկրին և այն ծառայում է լուսնին սնելու համար և հնարավոր է դարձնում նրա աճն ու հզորացումը: Բայց երկիրը նույնպես մեծանում է ոչ թե չափսի իմաստով, այլ գիտակցության և ընկալունակության իմաստով: Մոլորակային ազդեցությունները, որոնք բավարար էին նրա համար իր գոյության մի շրջանում, դառնում են անբավարար. նրան ավելի լավ ազդեցություններ են այժմ պետք ընկալել: Ավելի լավ ազդակներ ստանալու համար նրան ավելի լավ, ավելի զգայուն հաղորդիչ ապարատներ են անհրաժեշտ: Օրգանական կյանքը, հետևաբար, պետք է զարգանա, հարմարեցնի իրեն երգրագնդերի և երկրի կարիքներին: Նույն կերպ նաև լուսինը կարող է մի որոշ ժամանակ բավարարված լինել

այն տեսակի սնունդով, որը նրան տալիս է օրգանական կյանքը, բայց դրանից հետո գալիս է այնպիսի ժամանակ, երբ նա այլևս դադարում է բավարարվել այդ սննդով, չի կարողանում այլևս աճել դրանով և սկսում է քաղցած մնալ: Օրգանական կյանքը պետք է կարողանա բավարարել այս քաղցը, հակառակ դեպքում կստացվի, որ այն չի իրականացնում իր գործառույթը, չի ծառայում իր նպատակին: Սա նշանակում է, որ իր նպատակին ծառայելու համար օրգանական կյանքը պետք է զարգանա և հասնի այն մակարդակին, որի վրա են մոլորակների, երկրի և լուսնի կարիքները:

Մենք պետք է հիշենք, որ արարման ճառագայթը, ինչպես որ մենք ենք դիտարկում Բացարձակից մինչև լուսին, նման է ծառի ճյուղի՝ աճող ճյուղի: Այս ճյուղի վերջը՝ վերջը, որտեղից որ նոր ճյուղեր են սկիզբ առնում, լուսինն է: Եթե լուսինը չի աճում, եթե այն ոչ տալիս է, ոչ էլ խոստանում է տալ նոր ճյուղեր, նշանակում է, որ շուտով ամբողջ արարման ճառագայթի աճը կկանգնի կամ որ այն պետք է նոր ուղիներ գտնի իր աճը ապահովելու համար, սկիզբ տա այսպես կոչված կողմնակի ճյուղերի: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն ասվել է, լուսնի աճը պայմանավորված է երկրի վրա օրգանական կյանքի հետ: Սրանից հետևում է, որ արարման ճառագայթի աճը նույնպես պայամանավորված է երկրի վրայի օրգանական կյանքով: Եթե այս օրգանական կյանքը անհետանա կամ մահանա, ամբողջ ճյուղը միանգամից կչորանա. ամեն դեպքում այս ամբողջ ճյուղը կախված է օրգանական կյանքից: Նույն բանը կպատահի, միայն մի փոքր ավելի դանդաղ, եթե օրգանական կյանքը բանտարկված է և չի զարգանում, էվոլյուցիայի չի ենթարկվում և չի կարողանում պատասխանել իր առջև դրված պահանջներին: Ճյուղը կարող է թոռոմել: Սա պետք է հիշել: Արարման ճյուղին կամ դրա մաս կազմող երկիր-լուսին համակցությանը, տրված է զարգանալու և աճելու ճիշտ նույն հնարավորությունը, ինչ տրված է մեծ ծառի յուրաքանչյուր ճյուղին: Բայց այս աճի հաջողումը ամենևին էլ երաշխավորված չէ, այն կախված է իր սեփական հյուսվածքների համահունչ և ճիշտ շարժումներից: Երբ կանգնում է մեկ հյուսվածքի զարգացումը՝ մյուսներինն էլ է կանգնում: Այն ամենն, ինչ կարելի է ասել արարման ճառագայթի կամ դրա՝ երկիր-լուսին մասի վերաբերյալ կապված է երկրի վրա օրգանական կյանքի հետ: Օրգանական կյանքը երկրի վրա շատ բարդ երևույթ է, որի առանձին մասերը կապված են իրար հետ: Ընդհանուր աճը հնարավոր է միայն այն պայմանով, որ ճյուղի վերջը աճի: Եթե ավելի մանրամասն խոսենք, օրգանական կյանքում կան հյուսվածքներ, որոնք զարգանում են, և գոյություն ունեն այլ հյուսվածքներ, որոնք ծառայում են որպես սնունդ կամ միջոց զարգացողների համար: Զարգացող հյուսվածքներում կան նաև զարգացող բջիջներ, նաև բջիջներ, որոնք ծառայում են որպես սնունդ կամ միջոց նրանց համար, որոնք զարգանում են: Յուրաքանչյուր առանձին զարգացող բջջի մեջ կան զարգացող մասեր և կան նաև այլ մասեր, որոնք ծառայում են որպես սնունդ նրանց համար, որոնք որ զարգանում են: Միայն միշտ և ամեն ինչում պետք է հիշել, որ էվոլյուցիան երբեք երաշխավորված չէ. այն միայն հնարավոր է և կարող է կանգ առնել ցանկացած պահի և ցանկացած վայրում:

Օրգանական կյանքի զարգացող մասը մարդկությունն է: Մարդկությունը նույնպես ունի իր զարգացող մասը, բայց սրա մասին մենք ավելի ուշ կխոսենք, այս պահին մենք կդիտարկենք մարդկությունը՝ որպես ամբողջություն: Եթե մարդկությունը չզարգանա, դա կնշանակի, որ օրգանական կյանքի զարգացումը կանգ է առել, և սա իր հերթին կհանգեցնի արարման ճառագայթի աճի դադարեցմանը: Միևնույն ժամանակ եթե մարդկությունը դադարի զարգանալ, այն կդառնա անպետք այն նպատակների տեսակետից, որոնց համար այն ստեղծվել է, և որպես այդպիսին այն կարող է ոչնչացվել: Այս դեպքում էվոլյուցիայի ընդհատումը կարող է նշանակել մարդկության կործանում:

‘Մենք գաղափար անգամ չունենք, թե մոլորակային էվոլյուցիայի որ շրջանում ենք այժմ գտնվում, և արդյոք լուսինն ու երկիրը այժմ ժամանակ ունեն սպասելու օրգանական կյանքի համապատասխան էվոլյուցիային, թե ոչ: Բայց մարդիկ, ովքեր գիտեն դա, իհարկե ունեն հստակ ինֆորմացիաե այդ մասին. այն է՝ նրանք գիտեն, թե իրենց հնարավոր զարգացման որ մակարդակում են այժմ գտնվում երկիրը, լուսինն ու մարդկությունը: Մենք չենք կարող սա իմանալ, բայց պետք է հիշենք, որ հնարավորությունների քանակը երբեք անսահման չէ:

‘Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով մարդկության կյանքը՝ ինչպես մենք արդեն գիտենք պատմությունից, մենք հակված ենք ընդունել, որ մարդկության շարժումը մի շրջան է: Մի դարում այն ոչնչացնում է ամեն ինչ, մյուսում՝ արարում, և վերջին հարյուրավոր տարիների մեխանիկական երևույթների առաջընթացը հանգեցրել է շատ ավելի այլ բաների կորստին, որոնք երևի ավելի կարևոր են եղել: Եթե ընդհանրացնենք, բոլոր պատճառներն ունենք մտածելու և հաստատելու, որ մարդկությունը դոփում է նույն տեղում և այդ նույն կանգնած տեղից ուղիղ տանում է դեպի անկում կամ հետընթաց: Նույն տեղում լինելը նշանակում է, որ գործընթացը հավասարակշռված վիճակում է: Ցանկացած որակի հայտնվելը անմիջապես առաջացնում է մեկ այլ որակի առաջացում, որը հակադրվում է մյուսին: Գիտելիքների աճը մի ասպարեզում հանգեցնում է անտարբերության առաջացման մյուսում, կատարելագործումը մի տեղում հանգեցնում է բռիության մյուսում, ազատությունը մի կողմում հանգեցնում է ստրկության մյուսում, որոշ սնահավատությունների անհետացումը հանգեցնում է այլ սնահավատությունների աճին, և այդպես շարունակ՝:

‘Այժմ եթե վերհիշենք օկտավաների օրենքը, կհասկանանք, որ որոշակի հունով շարժվող հավասարակշիռ գործընթացը հնարավոր չէ ամեն ցանկացած պահի փոխել: Այն կարելի է փոխել և նոր ուղու վրա դնել միայն որոշակի խաչմերուկների հատման դեպքում: Խաչմերուկների միջև ոչինչ անել հնարավոր չէ: Միևնույն ժամանակ, եթե գործընթացը հայտնվել է տվյալ խաչմերուկում, բայց ոչինչ էլ չի կատարվում, նշանակում է՝ ոչինչ չի արվել և ոչինչ այլևս հնարավոր չէ անել, և այդ պրոցեսը կշարունակի սլանալ և զարգանալ կյանքի մեխանիկական օրենքների համաձայն. նույնիսկ եթե այդ գործընթացում ներգրավված մարդիկ կանխատեսեն դրա անխուսափելի արդյունքները, նրանք միևնույնն է ի վիճակի չեն լինի ինչ-որ բան անել: Ես կրկնում եմ, որ ինչ-որ բան հնրավոր է անել միայն հատուկ պահերը հասկանալու ժամանակ, որոնք որ ես քիչ առաջ անվանեցի ‘խաչմերուկներ’ և որոնք օկտավաներով մենք կոչում ենք մի-ֆա և սի-դո ինտերվալներ՝:

‘Իհարկե, կան շատ մարդիկ, ովքեր կարծում են, որ մարդկության կյանքը չի ընթանում այն ձևով, որով, ըստ իրենց, պետք է ընթանա: Եվ նրանք հորինում են բազմաթիվ տեսություններ, որոնք, նրանց կարծիքով, պետք է փոխեն ողջ մարդկության կյանքը: Մեկը մի տեսություն է հորինում: Մյուսը անմիջապես հորինում է մեկ այլ հակադիր տեսություն: Եվ երկուսն էլ ակնկալում են, որ բոլորը հավատան դրանց: Եվ շատերն էլ իսկապես հավատում են այս կամ այն տեսությանը: Իհարկե, կյանքը իրենն է առաջ տանում, բայց մարդիկ չեն դադարում հավատալ իրենց կամ մյուսների հորինած տեսություններին, և հավատում են, որ ինչ-որ բան հնարավոր է փոխել: Այս բոլոր տեսությունները իրոք ֆանտաստիկ են, հիմնականում քանի որ դրանք հաշվի չեն առնում ամենակարևոր փաստը՝ այսպես կոչված այն երկրորդական դերը, որ մարդկությունն ու օրգանական կյանքը խաղում են կյանքի գործընթացում: Ինտելեկտուալ տեսությունները ամեն ինչի կենտրոնում ներկայացնում են մարդուն. ամեն ինչ գոյություն ունի միայն նրա համար՝ արևը, աստղերը, լուսինը, երկիր

մոլորակը: Նրանք նույնիսկ մոռանում են մարդու հարաբերական չափ~~ս~~ի գաղափարի մասին, նրա ոչնչության, նրա անցավոր գոյության և այլ բաների մասին: Դրանք հաստատում են, որ եթե մարդը ցանկանա, նա կարող է փոխել իր ամբողջ կյանքը, այն է՝ դասավորել իր կյանքը ռացիոնալ սկզբունքների հիման վրա: Եվ ամբողջ ժամանակ նոր տեսություններ են հայտնվում՝ իրենց հերթին առաջացնելով նոր հակադիր տեսություններ. այս բոլոր տեսությունները և դրանց միջև պայքարը անկասկած այն պատճառներից մեկն է, որ մարդկության պահում է այն վիճակի մեջ, որի մեջ այն այս պահին է: Բացի այդ, այս բոլոր տեսությունները ոչ միայն անիրագործելի են ընդհանուր բարորության և ընդհանուր հավասարության համար, այլ նաև դրանք ճակատագրական կլինեին, եթե իրագործվեին: Բնության մեջ ամեն ինչ ունի իր հստակ նպատակն ու պատճառը, ինչպես նաև մարդկության անհավասարությունն ու նրա տառապանքները: Վերացնել անհավասարությունը կնշանակի վերացնել էվոլյուցիայի հնարավորությունները: Վերացնել տառապանքները կնշանակի առաջին հերթին վերացնել իմացության այն ամբողջ շղթան, որի համար մարդը գոյություն ունի, և երկրորդ հերթին, վերցանել 'հարված'-ի երևույթը, որը կարելի է ասել՝ այն միակ ուժն է, որը կարող է փոխել իրավիճակները: Այսպիսին են բոլոր ինտելեկտուալ տեսությունները՝:

"Էվոլյուցիայի գործընթացը, այն էվոլյուցիայի, որը հնարավոր է ամբողջ մարդկության համար, միանգամայն համանման է այն էվոլյուցիային ~~հետ~~, որը հնարավոր է առանձին անհատի համար: Եվ այն սկսվում է միևնույն տեղից, այն է՝ բջիջների որոշակի խումբ աստիճանաբար դառնում է ավելի գիտակից, այնուհետև այն գրավում է այլ բջիջների, ստորադաս դարձնում դրանց, և աստիճանաբար ստիպում է ամբողջ օրգանիզմին ծառայել իր նպատակներին և չապրել պարզապես ուտելով, խմելով և քնելով: Սա է էվոլյուցիան, և չի կարող լինել մեկ այլ տեսակի էվոլյուցիա: Մարդկության մեջ, ինչպես ամեն անհատի մեջ ամեն ինչ սկսում է գիտակից նյարդային կենտրոնի ձևավորումից: Կյանքի բոլոր մեխանիկական ուժերը պայքարում են մարդկության մեջ այս գիտակից կենտրոնի ձևավորման դեմ, նույն կերպ, ինչպես բոլոր մեխանիկական սովորույթները, ցանկությունները և թուլությունները պայքարում են գիտակից 'ինքնա-հիշողությանը' մարդու մեջ":

"Կարելի՞ է ասել, որ գոյություն ունի մի գիտակից ուժ, որը պայքարում է մարդկության էվոլյուցիայի դեմ", - հարցրեցի ես:

"Ինչ-որ տեսակետից՝ կարելի է նաև այդպես ասել", - ասեց Գ.-ն:

Ես սրանք գրանցում եմ, քանի որ այն կարող է հակադրության մեջ մտնել իր նախկին ասածի հետ, այն է՝ աշխարհում պայքարող միայն երկու ուժ կա՝ "գիտակցությունն" ու "անգիտակցությունը" (մեխանիկականը):

՝Որտեղի՞ց կարող է առաջանալ այս ուժը՝, - հարցրեցի ես:

՝Շատ երկար ժամանակ կպահանջվի դա բացատրելու համար՝, - ասեց Գ.-ն, - ՝և այն չի կարող կիրառական նշանակություն ունենալ մեզ համար այս պահին: Գոյություն ունեն երկու պրոցեսներ, որոնք երբեմն կոչվում են 'հակաէվոլյուցիոն' և 'էվոլյուցիոն': Դրանց միջև տարբերությունը հետևյալն է. հակաէվոլյուցիոն պրոցեսը սկսվում է գիտակցական Բացարձակում, բայց հաջորդ քայլում այն արդեն դառնում է մեխանիկական, և աստիճանաբար զարգացման հետ զուգընթաց այն դառնում է ավելի ու ավելի մեխանիկական. էվոլյուցիոն գործընթացը սկսվում է կիսագիտակից վիճակում, բայց զարգացման հետ մեկտեղ դառնում է ավելի գիտակից: Սակայն գիտակցությունն ու գիտակից հակադրությունը ուղղված էվոլյուցիոն պրոցեսին նույնպես կարող են հանդիպել հակաէվոլյուցիոն պրոցեսի հատուկ պահերի ընթացքում: Ո՞րտեղից է

ծագում այս գիտակցությունը: Իհարկե՝ էվոլյուցիոն գործընթացից: Էվոլյուցիոն պրոցեսը պետք է շարունակվի առանց ընդհատումների: Ցանկացած ընդհատում արդյունք է դառնում հեռացմանը՝ հիմնական պրոցեսից: Գիտակցության այդպիսի ընդհատված մասերը, որոնք ընդհատվել են իրենց զարգացման ընթացքում կարող են նույնպես միավորվել և տարբեր ձևերով ցանկացած ժամանակ գոյատևել՝ պայքարելով էվոլյուցիոն գործընթացի դեմ: Ի վերջո դա իրականում ավելի հետաքրքիր է դարձնում էվոլյուցիոն գործընթացը: Մեխանիկական ուժերի դեմ պայքարելու փոխարեն առանձին պահերի կարող է նաև պայքար նկատվել հիմնավորված հզոր ուժերի մտադրված հակադրության դեմ, բայց, իհարկե, դրանք համեմատելի չեն այն ուժերի հետ, որոնք կառավորում են էվոլյուցիոն գործընթացը: Այս հակադրվող ուժերը կարող են երբեմն նաև հաղթանակ տանել: Սրա պատճառը հանդիսանում է այն փաստը, որ էվոլյուցիան կառավարող ուժերը միջոցների ավելի սահմանափակ հնարավորություն ունեն. այլ խոսքերով՝ դրանք կարող են օգտագործել միայն որոշակի միջոցներ և որոշակի մեթոդներ: Հակադրվող ուժերը սահամանափակված չեն իրենց միջոցների հնարավորության մեջ և դրանք հնարավորություն ունեն օգտագործել ցանկացած միջոց, նույնիսկ այնպիսի միջոցներ, որոնք միայն կարճ հաջողությունների են հասցնում, և վերջնական արդյունքում դրանք ոչնչացնում են թե էվոլյուցիան, թե հակաէվոլյուցիան որոշակի աստիճանում:

՝Բայց ինչպես արդեն նշեցի, այս հարցը ոչ մի կիրառական նշանակություն չունի մեզ համար: Այն միայն կարևոր է հաստատելու՝ էվոլյուցիայի սկիզբը և ընթացքը խորհրդանշող ցուցիչների համար: Եվ եթե մենք հիշենք ամբողջական համանմանությունը մարդկության և մարդու միջև, դժվար չի լինի սահմանել՝ արդյոք մարդկությունը կարելի է համարել զարգացող, թե ոչ:

՝Կարելի՞ է արդյոք ասել, որ կյանքը կառավարվում է մի խումբ գիտակից մարդկանց կողմից: Որտե՞ղ են նրանք: Ովքե՞ր են նրանք: Մենք տեսնում ենք միանգամայն հակառակ երևույթը. կյանքը կառավարվում է նրանց կողմից, ովքեր ամենաքիչ գիտակիցն են, նրանց կողմից, ովքեր ամենից շատ են քուն մտած:

՝Կարո՞ղ ենք ասել, որ մենք փնտրում ենք ամենալավի, ամենաուժեղի, ամենահամարձակ էլեմենտների գերակշռությունը մեր կյանքում: Ոչ մի նման բան: Ճիշտ հակառակը՝ մենք տեսնում ենք գռեհկության և ամեն տեսակի հիմարության գերակշռությունը:

՝Կարո՞ղ ենք ասել, որ կյանքում կարելի է տեսնել ձգտում՝ ուղղված միությանը, միասնությանը: Իհարկե, ոչ: Մենք միայն տեսնում ենք նոր բաժանումներ, նոր ատելություններ, նոր թյուրիմացություններ:

՝Այսպիսով, մարդկության իրական վիճակում ոչինչ չկա, որ կարող է ցույց տալ էվոլյուցիայի ընթացքը: Ի հակադրություն սրան՝ համեմատելով մարդկությանը առանձին մարդու հետ, բացահայտ կարող ենք տեսնել անձի աճ՝ էության տեսանկյունից. այն է՝ արհեստականի, անիրականի և օտարի աճ՝ ձեռք բերված բնականի, իրականի և նրա սեփականի գնով:

՝Սրա հետ մեկտեղ մենք ականատես ենք լինում ավտոմատացման աճին՝:

՝Ժամանակակից արվեստը ավտոմատների պահանջ ունի: Եվ մարդիկ անկասկած կորցնում են իրենց՝ անկախության ձեռք բերված սովորույթները, և վերածվում են ավտոմատների՝ մեքենայի մասերի: Դժվար է ասել՝ որն է այս ամենի ավարտը և թե որն է դրանից դուրս գալու ճանապարհը, կամ արդյո՞ք գոյություն ունի վերջ կամ փրկության ճանապարհ: Մի բան հստակ է. մարդու ստրկացումը աճում է և մեծանում: Մարդը վերածվում է կամավոր ստրուկի: Նրան այլևս սանձեր պետք չեն: Նա սկսում է դառնալ

իր իսկ ստրկության սիրահարը, սկսում է հպարտանալ դրանով: Եվ սա ամենից ահավորն է, որ կարող է կատարվել մարդու հետ՝:

‘Ամենը, ինչ ասել եմ, վերաբերել է ամբողջ մարդկությանը: Բայց ինչպես նշեցի, մարդկության էվոլյուցիան կարող է ընթանալ միայն մի որոշակի խմբի էվոլյուցիայի միջոցով, որն էլ իր հերթին իր ազդեցությունը կունենա և կառաջնորդի մարդկության մյուս մասին՝:

‘Կարո՞ղ ենք ասել, որ գոյություն ունի այդպիսի խումբ: Միգուցե կարող ենք՝ հիմնվելով որոշակի նշանների վրա, բայց ամեն դեպքում պետք է հասկանալ, որ դա շատ փոքր խումբ է՝ բավականին անբավարար ամեն տեսակետից մարդկության մյուս մասին նվաճելու համար: Կամ նայելով դրան մեկ այլ տեսանկյունից՝ կարող ենք ասել, որ մարդկությունը այնպիսի վիճակում է, որ չի կարող ընդունել մի գիտակից խմբի առաջնորդությունը՝:

‘Քանի՞ մարդ կարող է լինել այս գիտակից խմբում՝, - հարցրեց ինչ-որ մեկը:

‘Միայն իրենք իրենցով գիտեն դա՝, - պատասխանեց Գ.-ն:

‘Դա նշանակում է, որ նրանք բոլորը ճանաչում են միմյա՞նց՝, - նորից նույն մարդը հարցրեց:

‘Ինչպե՞ս չէ՝, - ասեց Գ.-ն, - ‘պատկերացրեք երկու կամ երեք հոգի կա, որոնք արթուն են հազարավոր քնած մարդկանց բազմության մեջ: Իհարկե, նրանք կճանաչեն միմյանց: Բայց քնածները չեն կարող ճանաչել նրանց: Քանի՞սն են նրանք: Մենք չգիտենք և մենք չենք կարող իմանալ՝ մինչև չդառնանք նրանց նման: Հստակ ասվել է, որ ամեն մարդ կարող է միայն տեսնել իր սեփական անձի մակարդակի վրա: Բայց երկու հարյուր գիտակից մարդ, եթե նրանք գոյություն ունենային և հարմար ու օրինական համարվեին, կարող էին փոխել ամբողջ աշխարհում: Սակայն կամ նրանց թիվը քիչ է կամ նրանք ցանկություն չունեն կամ միգուցե դեռ ժամանակը չի եկել կամ միգուցե մյուս մարդիկ շատ խորն են քնած՝:

‘Մենք մոտեցանք էզոթերիզմի խնդրին:

Դրա մասին նշվեց, երբ խոսում էինք մարդկության պատմության մասին, որ մարդկության կյանքը, որին մենք պատկանում ենք, կառավարվում է երկու տարբեր աղբյուրներից եկող ուժերի միջոցով. առաջինը մոլորակների ազդեցությունն է, որը միանգամայն մեխանիկորեն է գործում և մարդկության, ինչպես նաև անհատների կողմից ընկալվում է հակաէվոլյուցիոն կերպով և անգիտակացաբար, և երկրորդը՝ մարդկության ներքին օղակներից բխող ազդեցությունն է, որի գոյության և կարևորության մասին մարդկանց լայն զանգվածը չի էլ կասկածում ավելի շատ, քան մոլորակների ազդեցության մասին:

Մարդկությունը, որին մենք պատկանում ենք, այն է՝ պատմական և նախապատմական մարդկությունը, որը հայտնի է գիտությանն ու քաղաքակրթությանը, իրականում կազմում է միայն մարդկության *արտաքին օղակը*, որի ներսում կան մի քանի այլ օղակներ:

Այսպիսով, որպեսզի կարողանանք պատկերացնել ամբողջ մարդկությունը՝ ինչպես մեզ հայտնի, այնպես էլ մեզ անհայտ, խոսենք մի քանի կենտրոնացված օղակների մասին:

Ներքին օղակը կոչվում է ‘էզոթերիկ’. այս օղակը բաղկացած է այն մարդկանցից, ովքեր նվաճել են մարդու կողմից հասանելի ամենաբարձր զարգացումները, և նրանցից ամեն մեկն ունի անհատականության լիարժեք աստիճան, կարելի է ասել՝ անբաժանելի ‘ես’՝ մարդու համար սահմանված գիտակցության բոլոր հնարավոր ձևերը, գիտակցության այս արտահայտումների լիարժեք կառավարում, մարդու համար

հասանելի ամբողջական իմացություն և ազատ ու անկախ կամք: Նրանք չեն կարող գործել իրենց հասկացողության դեմ կամ այնպիսի հասկացողություն ունենալ, որը չի արտահայտվում արարքների միջոցով: Միևնույն ժամանակ նրանց միջև ոչ մի տարաձայնություն չի կարող ի հայտ գալ, ընկալման ոչ մի տարբերություններ: Այդպիսով, նրանց գործունեությունը ամբողջովին համակարգված է և տանում է դեպի մեկ ընդհանուր նպատակ, առանց որևիցե հարկադրանքի, քանի որ այն հիմնված է մեկ ընդհանուր և միևնույն հասկացողության վրա:

Հաջորդ օղակը կոչվում է 'մեզոթերիկ'՝ միջին օղակ: Այս օղակին պատկանող մարդիկ տիրապետում են բոլոր այն հատկանիշներին, որոնք ունեն նաև 'էզոթերիկ' օղակի անդամները, միայն մեկ տարբերությամբ, այն է՝ նրանց գիտելիքները ավելի տեսական բնույթ են կրում: Սա, իհարկե, վերաբերում է տիեզերական էության մասին գիտելիքներին: Նրանք գիտեն և հասկանում են շատ բաներ, որոնք դեռ չեն արտահայտվել նրանց արարքներում: Նրանք գիտեն ավելին, քան անում են: Բայց նրանց հասկացողությունը միանգամայն հստակ է, ինչպես նաև միանգմայն նման էզոթերիկ օղակի անդամների հասկացողությանը: Նրանց միջև տարաձայնություններ չեն կարող լինել. չի կարող լինել ոչ մի թյուրիմացություն: Մեկը հասկանում է նույն կերպով, ինչպես բոլոր մյուսները, և բոլորը հասկանում են նույն կերպ, ինչ մեկը: Բայց ինչպես արդեն ասվեց, նրանց հասկացողությունը էզոթերիկ օղակի անդամների հասկացողության հետ համեմատելիս՝ ավելի տեսական բնույթ է կրում:

Երրորդ օղակը կոչվում է 'էկզոթերիկ'. այն է՝ արտաքին օղակ, քանի որ այն մարդկության ներքին մասի արտաքին օղակն է: Մարդիկ, ովքեր պատկանում են այս օղակին, ունեն էզոթերիկ և մեզոթերիկ օղակներին պատկանողների հատկանիշների մի որոշակի մաս, սակայն նրանց տիեզերական գիտելիքները ավելի փիլիսոփայական բնույթ ունեն, այսինքն՝ վերջինս ավելի վերացական է, քան մեզոթերիկի գիտելիքները: Մեզոթերիկ օղակի անդամը հաշվարկում է, էկզոթերիկ խմբի անդամը խորհում է: Վերջիններիս հասկացողությունը կարող է չարտահայտվել գործողություններով: Բայց նրանց հասկանալու մեջ տարբերություններ չեն կարող լինել: Ինչ հասկանում է մեկը, հասկանում են նաև մյուսները:

Գրականությունը, որտեղ ճանաչվում է էզոթերիզմ մարդկության մասին, սովորաբար բաժանվում է միայն երկու օղակների, և 'էկզոթերիկ օղակը' ի հակադրություն 'էզոթերիկի', կոչվում է սովորական կյանք: Իրականում, ինչպես նկատում ենք, 'էկզոթերիկ օղակը' մեզնից շատ հեռու և բարձր գտնվող ինչ-որ մի բան է: Սովորական մարդու համար սա արդեն 'էզոթերիզմ' է:

'Արտաքին օղակը' մեխանիկական մարդկության օղակն է, որին որ մենք պատկանում ենք, և միայն որի մասին գիտենք: Այս օղակի առաջին նշանն այն է, որ այն մարդկանց շրջանակներում, ովքեր պատկանում են այս օղակին, չկա և չի կարող լինել ոչ մի ընդհանուր ըմբռնում: Ամեն մեկը հասկանում է իր իսկ և միանգամայն տարբեր ձևով: Այս օղակը երբեմն կոչվում է նաև 'լեզուների խառնաշփոթության' օղակ. այն է՝ օղակ, որտեղ յուրաքանչյուրը խոսում է իր սեփական հատուկ լեզվով, որտեղ ոչ ոք չի հասկանում ուրիշին և ջանք չի գործադրում հասկացված լինելու համար: Այս օղակում մարդկանց միջև փոխըմբռնումը ուղղակի անհնար է, բացառությամբ բացառիկ հազվադեպ կամ անկարևոր հարցերում: Եթե այս օղակին պատկանող մարդիկ գիտակցեն ընդհանուր փոխըմբռնման այս պակասը, և ցանկություն ունենան հասկանալ և լինել հասկացված, այդ դեպքում կնշանակի, որ նրանք ենթագիտակցորեն ձգտում ունեն դեպի ներքին օղակ, քանի որ փոխըմբռնումը սկսվում է միայն էկզոթերիկ օղակում և հնարավոր է միայն այդ օղակում: Սակայն փոխըմբռնման բացակայության

մասին գիտակցումը սովորաբար մարդկանց մոտ արտահայտվում է միանգամայն տարբեր ձևերով:

Այսպիսով, մարդկանց միմյանց հասկանալու հնարավորությունը կախված է էկզոթերիկ օղակ ներթափանցելու հնարավորությունից, որտեղ էլ սկսվում է փոխըմբռնումը:

Եթե մենք պատկերացնենք մարդկությանը չորս կենտրոնացված օղակների շրջանակներում, մենք կարող ենք պատկերացնել չորս դարպասներ երրորդ ներքին օղակի՝ էկզոթերիկ օղակի շրջակայքում, որի միջով մեխանիկական օղակի մարդիկ կարող են ներթափանցել:

Այս չորս դարպասները համապատասխանում են վերևում նկարագրված չորս ձևերին:

Առաջինը ֆակիրի տարբերակն է՝ առաջին տեսակի մարդկանց տարբերակը՝ ֆիզիկական մարմնի գերի, բնազդաբար-շարժողական-զգայական մարդկանց տեսակ, որոնք չունեն խորը միտք և մեծ սիրտ:

Երկրորդը վանականի ճանապարհն է՝ կրոնականը, երկրորդ տեսակի, այն է՝ էմոցիոնալ մարդկանց ճանապարհը: Ուղեղը և մարմինը չպետք է շատ ուժեղ լինեն:

Երրորդ ճանապարհը յոգայի միջոցով է: Սա ուղեղի ճանապարհն է՝ երրորդ տեսակի մարդկանց ուղին: Սիրտը և մարմինը չպետք է ուժեղ լինեն, այլապես կարող են խոչընդոտ հանդիսանալ ճանապարհին:

Բացի այս երեք ուղիներից, գոյություն ունի նաև չորրորդը, որով ընթանում են այն մարդիկ, ովքեր չեն կարողանում գնալ վերոհիշյալ երեք ճանապարհներից մեկով:

Այս երեք ճանապարհների՝ ֆակիրի, վանականի, յոգայի և չորրորդ ուղու միջև հիմնական տարբերությունը այն փաստն է, որ դրանք կապված են մշտական ձևերի հետ, որոնք գոյություն են ունեցել տարիներ շարունակ պատմության ընթացքում առանց որևիցե փոփոխության: Դրանց հիմքում կրոնն է: Յոգաների դպրոցները ակնհայտ տարբերվում են կրոնական դպրոցներից: Եվ պատմական տարբեր ժամանակահատվածներում տարբեր երկրներում գոյություն են ունեցել բազմաթիվ հասարակություններ կամ ֆակիրների խմբեր և դեռ շարունակում են գոյատևել: Այս երեք ավանդական ձևերը մշտական են մեր պատմական ժամանակահատվածի սահմաններում:

Երկու կամ երեք հազարավոր տարիներ առաջ գոյություն ունեին նաև այլ ձևեր, որոնք սակայն այլևս գոյություն չունեն, և գոյություն ունեցող ձևերը այդքան բաժանված չէին իրարից՝ դրանք ավելի մոտ էին կանգնած իրար:

Չորրորդ ձևը տարբերվում է հներից և նորերից նրանով, որ փաստացի այն երբեք չի կարող լինել մշտական ձև: Այն չունի ոչ մի որոշակի ձև և կապված չէ որևէ հաստատության հետ: Այն հայտնվում է և անհայտանում՝ ըստ իր իսկ սեփական որոշակի օրենքների:

Չորրորդ ձևը երբեք հանդես չի գալիս առանց որոշակի կարևորություն ունեցող գործի, որի նկատմամբ պետք է ինչ-որ բան ձեռնարկել, և միայն որի հետ կապակցված լինելով այն կարող է գոյատևել: Երբ այդ գործն ավարտվում է, այսինքն, երբ դրա առջև դրված նպատակն իրականացվում է, չորրորդ ձևն անհետանում. այն անհետանում է տվյալ տեղից, անհետանում իր ներկայացած ձևից՝ միգուցե շարունակվելով ինչ-որ այլ վայրում, այլ ձևով: Չորրորդ ձևին ծառայող դպրոցները գոյություն ունեն տվյալ աշխատանքի կարիքները բավարարելու համար, որն իրականացվում է՝ կապված առաջարկված ձեռնարկումների հետ մեկտեղ: Դրանք առանձին երբեք չեն կարող գոյատևել՝ հետապնդելով կրթական հաստատության կամ դպրոցի նպատակներ:

Չորրորդ ձևի աշխատանքների իրականացման համար մեխանիկական աջակցություն չի պահանջվում: Միայն գիտակից աշխատանքը կարող է օգտակար լինել չորրորդ ձևի բոլոր ձեռնարկումների իրականացման համար: Մեխանկիկական մարդը չի կարող այնպիսի գիտակից աշխատանք տանել, որ մարդկանց առաջին առաջադրանքը, ովքեր պետք է վարեն այդ աշխատանքը, լինի գիտակից աջակիցներ ստեղծելը:

Չորրորդ ձևի դպրոցի աշխատանքները կարող են շատ տարբեր արտահայտման ձևեր ունենան և շատ տարբեր իմաստներ: Կյանքի սովորական պայմաններում մարդու՝ 'ուղին' գտնելու միակ հնարավորությունը, այս կարգի աշխատանքի սկզբի հետ հանդիպելու հնարավուրությունն է: Սակայն այդպիսի աշխատանքի հետ հանդիպելու, ինչպես նաև դրանից օգուտ քաղելու հնարավորությունը կախված է շատ տարբեր հանգամանքներից և պայմաններից:

Որքան արագ մարդը կարողանա ընկալել այն աշխատանքի նպատակը, որը իրագործվում է, այնքան ավելի արագ նա կարող է օգտակար լինել դրան և ավելի շատ բան քաղել դրանից իր համար:

Սակայն էական չէ՝ որքան հիմնավոր է այդ աշխատանքի նպատակը, այդ դպրոցները գոյատևում են միայն այնքան ժամանակ, որքան շարունակվում է տվյալ աշխատանքը: Երբ աշխատանքն ավարտվում է, դպրոցը փակվում է: Մարդիկ, ովքեր կատարում էին աշխատանքը, լքում են բեմը: Նրանք, ովքեր ինչ-որ բան սովորել էին դրանից, ինչ հնարավոր էր սովորել, և ովքեր ձեռք են բերել ինքնուրույն շարունակելու հնարավորությունը, սկսում են այս կամ այն ձևով կառուցել իրենց սեփական աշխատանքը:

Բայց երբեմն նաև պատահում է, որ երբ դպրոցը փակվում է, մնում են մի քանի մարդիկ, ովքեր աշխատանքի շուրջ էին, ովքեր տեսնում էին դրա արտաքին կողմը, և տեսնում էին ամբողջ աշխատանքը իր արտաքին կողմով:

Չունենալով ոչ մի կասկած իրենց եզրակացությունների և հասկացողության ճշմարտացիության մեջ՝ նրանք որոշում են շարունակել տվյալ աշխատանքը: Իսկ աշխատանքը շարունակելու համար նրանք ստեղծում են նոր դպրոցներ, սովորեցնում են մարդկանց, այն, ինչ իրենք են սովորել և տալիս նրանց այն նույն խոստումները, որոնք իրենք են ստացել: Այս ամենը միայն կարող է լինել արտաքին նմանակում: Սակայն, երբ ետադարձ հայացք ենք գցում պատմությանը, համարյա անհնար է ասել՝ որտեղ է վերջանում իրականը, և որտեղ սկսվում նմանակումը: Եթե ավելի հստակ խոսենք, համարյա ամեն ինչ, ինչ գիտենք տարբեր տեսակի խորհրդավորական, մասոնական, ալքիմիական դպրոցների մասին, վերաբերում է այսպիսի նմանակումների: Մենք գործնականորեն ոչինիչ չգիտենք իրական դպրոցների մասին, եթե հաշվի չառնենք դրանց աշխատանքների արդյունքները, և դա էլ միայն եթե կարողանանք տարբերակել իրանական աշխատանքի արդյունքները կեղծիքներից կամ նմանակումներից:

Սակայն այդպիսի կեղծ-էզոթերիկ համակարգերը նույնպես իրենց դերն ունեն էզոթերիկ օղակների աշխատանքում և գործունեության մեջ: Դրանք միջանկյալ դեր են խաղում մարդկության, որն ամբողջովին ընկղմված է նյութական կյանքի մեջ, և դպրոցների միջև, որոնց հետաքրքրում է որոշակի թվով մարդկանց կրթելը, թե իրենց գոյությունը ապահովելու նպատակով, թե իրենց իրականացրած *տիեզերական* բնույթի աշխատանքների նպատակով: Մարդիկ հասնում են Էզոթերիզմի, ինչպես նաև հաղորդակից դառնալու գաղափարին հիմնականում կեզծ-էզոթերիկ համակարգերի և դպրոցների միջոցով, և եթե գոյություն չունենային այս կեղծ-էզոթերիկ դպրոցները,

մարդկության մեծամասնությունը ոչ մի հնարավորություն չէր ունենա լսելու կամ սովորելու կյանքից առավել կարևոր բաների գոյության մասին, քանի որ ճշմարտությունը իր անաղարտ ձևով անհասանելի կլիներ նրանց համար: Մարդու՝ հատկապես ներկայիս մարդու, էության շատ տարբեր հատկանիշների պատճառով, ճշմարտությունը կարող է հասանելի լինել մարդկանց միայն *ստի* տեսքով. միայն այս ձևով են մարդիկ ունակ ընկալել այն, միայն այս տեսքով են նրանք ունակ մարսելու և յուրացնելու այն: Չկեղտոտված ճշմարտությունը անմարսելի ուտելիք է նրանց համար:

Բացի այդ ճշմարտության սերմնահատիկը չփոփոխված տարբերակով հաճախ հանդիպում է կեղծ-էզոթերիկ շարժումներում, եկեղեցական կրոններում, աստվածաբանական դպրոցներում: Դրանք կարող են պահպանած լինել իրենց մատյաններում, ծիսակատարություններում, իրենց ավանդույթներում, հիերարխիայի ընկալումներում, իրենց դոգմաներում և օրենքներում:

Դժվար է գտնել էզոթերիկ դպրոցներ, այն է՝ ոչ *կեղծ-էզոթերիկ դպրոցներ,* որոնք երևի թե գոյություն ունեն արևելքի որոշ երկրներում, քանի որ դրանք գոյություն ունեն սովորական վանքերի և տաճարների կերպարանքով: Տիբեթյան վանքերը սովորաբար կառուցված են չորս համակենտրոն շրջանների կամ չորս համակենտրոն սրահների ձևով՝ առանձնացած բարձր պատերով: Հնդկական տաճարները՝ հատկապես հարավային Հնդկաստանում կառուցված տաճարները, կառուցված են նույն հատակագծով, միայն քառակուսու ձևով՝ մեկի մյուսի մեջ ընդգրկված: Հավատացյալները սովորաբար մուտք ունեն առաջին սրահ, և երբեմն նաև որպես բացառություն՝ այլ կրոնների հետևորդները և եվրոպացիները: Երկրորդ սրահ մուտք ունեն միայն հատուկ կաստայի պատկանող մարդիկ կամ նրանք, ովքեր հատուկ թույլտվություն ունեն: Երրորդ սրահ կարող են միայն մուտք ունենալ այն մարդիկ, ովքեր պատկանում են տաճարին, և չորրորդ սրահ մուտք ունեն միայն Բրահամաններն ու քրմերը: Այս կարգի կառույցները, որոնք չնչին փոփոխությունների են ենթարկվել, գոյություն ունեն ամենուր և դրանք հնարավորություն են ընձեռում էզոթերիկ դպրոցներին գոյություն ունենալ առանց նկատվելու: Տասնյակ վանքերից մեկը դպրոց է: Բայց ինչպե՞ս կարելի է դրանք ճանաչել: Եթե դուք մտնեք այնտեղ, կկարողանաք մտնել միայն առաջին սրահ. երկրորդ սրահ կարող են մտնել միայն աշակերտները: Սակայն դա դուք չգիտեք, քանզի ձեզ ասվել է, որ դրանք պատկանում են հատուկ կաստայի: Ինչ վերաբերում է երրորդ և չորրորդ սրահներին՝ դուք դրանց մասին չեք էլ կարող իմանալ: Փաստորեն, դուք կարող եք գտնել նույն դասավորությունը բոլոր տաճարներում, նախքան ձեզ ասեն, որ չեք կարող տարբերել էզոթերի տաճարը կամ վանքը սովորականից:

Հաղորդակից դառնալու գաղափարը, որին մենք հասնում ենք կեղծ-էզոթերիկ համակարգերի միջոցով, նույնպես փոխանցվում է մեզ միանգամայն սխալ ձևով: Հաղորդակից դառնալու արտաքին ծիսակատարությունների մասին հայտնի լեգենդները հորինվել են հնագույն խորհրդավորությունների մասին մեր ունեցած ինֆորմացիայից: Խորհրդավորությունները ներկայացնում են հատուկ մի ձևի, որում կողք կողքի՝ ուսումնասիրման երկար և բարդ ժամանակահատվածից հետո, արվել են հատուկ տեսակի թատերական ներկայացումներ, որոնք այլաբանական ձևով պատկերել են մարդկության և աշխարհի անցած ամբողջ ուղին:

Մարդկային գոյության մի մակարդակից մյուսին անցումը խորհրդանշվում էին հատուկ ծիսակատարությունների ներկայացմամբ, այն է՝ հաղորդակից դառնալը: Սակայն այդ փոփոխությունը հնարավոր չէ իրականանցել որևէ ծեսի միջոցով: Արարողությունները միայն կարող են խորհրդանշել իրականացված անցումը: Եվ միայն

կեզծ-էզոթերիկ համակարգերում է, որտեղ բացի այս արարողություններից ուրիշ ոչինչ չկա. նրանք այս արարողություններին սկսում են անկախ իմաստներ ավելացնել: Ենթադրվում է, որ երբ արարողությունը վերածվում է հաղորդության, փոխանցում կամ հաղոդակցում է որոշակի ուժեր հաղորդակցին: Սա նույնպես վերաբերում է նմանակման հոգեբանությանը: Չկա և չի կարող լինել առերևույթ հաղորդակցում: Իրականում գոյություն ունի միայն ինքնա-հաղորդակցում, ինքնա-ներկայացում: Համակարգերն ու դպրոցները կարող են ցույց տալ մեթոդներնն ու ձևերը, բայց ոչ մի համակարգ կամ դպրոց չի կարող անել մարդու համար այն աշխատանքը, որը նա կարող է անել ինքն իր համար: Ներքին աճը՝ մարդկային գոյության փոփոխությունը, կախված է միայն այն աշխատանքից, որը մարդ պետք է անի ինքն իր համար: